ԻՐԱԿԱՆԱՑՎՈՒՄ Է «ՎԱՆԱՁՈՐԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԿԼԻՆԻԿԱ» ԾՐԱԳԻՐԸ

06.11.2014 06:43

Հարգելի՛ փաստաբաններ,
Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակը և «Պոպուլեքս» փաստաբանական գրասենյակը Ամերիկյան իրավաբանների ընկերակցության հայաստանյան ներկայացուցչության աջակցությամբ իրականացնում են «Վանաձորի իրավաբանական կլինիկա» ծրագիրը։
Ծրագրի շրջանակներում ֆինանսավորվելու է ռազմավարական նշանակություն ունեցող 6 գործ, որոնք ուղղված կլինեն Հայաստանի Հանրապետությունում մարդու իրավունքների պաշտպանության բարելավմանը։
Ծրագրի խնդիրներն են բացահայտել մարդու իրավունքների խախտման դեպքերը պետության վերահսկողության ներքո գտնվող հաստատություններում՝ վատ վերաբերմունքից զերծ մնալու իրավունքի (ընթացակարգային դեպքերը, որոնք վերաբերվում են խոշտանգումներից զերծ մնալու իրավունքին), կյանքի իրավունքի, ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունքի և այլ իրավունքների խախտման դեպքում, և ռազմավարական դատավարության միջոցով հասնել խախտված իրավունքների վերականգման և իրավիճակի փոփոխության։
Հարցերի դեպքում կարող եք դիմել Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ (ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 59)՝ զանգահարելով ծրագրի համակարգող Անի Չատինյանին 093819275 հեռախոսահամարով։
Լրացված հայտերը պետք է ուղարկել achatinyan@hcav.am էլեկտրոնային հասցեին։
Կից ներկայացվում է հայտի ձևը։

ԲԵՌՆԵԼ ՀԱՅՏԸ

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })